ՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

(1972 թ. հուլիս—դեկտեմբեր)

ԲՈՒԼԳԱՐԻԱ

ՍՍՀՄ կազմավորման 50-ամյակի առթիվ նոյեմբերի 11-ին Սոֆիայի բուլգար-սովետական տանը կազմակերպվել է Սովետական Հայաստանին նվիրված երեկո։ Զեկուցումով հանդես է եկել Կարո Հայրապետյանը, որը փաստերով ու թվերով ցույց է տվել Հայաստանի կեղարյա վերելքը։ Զեկուցումից հետո ցուցադրվել են «Հայաստան» գունավոր վավերագրական և «Սարոյան եղբայրներ» կինոնկարները։

«Երևան», 17 նոյեմբերի

* * *

Հոկտեմբերի 29-ին «Երևանի» Պլովդիվի մասնաճյուղը տոնել է սովետահայ գրող Ե. Չարենցի ծննդյան տարեդարձը։ Չարենցի կյանքի և գործունեության մասին ելույթ է ունեցել Ջ. Ղազարոսյանը։

«Երևան», 24 նոյեմբերի

ՉԵԽՈՍԼՈՎԱԿԻԱ

Բրատիսլավայում բացվել է Անդրկովկասի երեք հանրապետությունների գեղարվեստական ցուցահանդեսը, որտեղ ցուցադրվել են գեղանկարչական, գրաֆիկական, բանդակագործական, կիրառական արվեստի մոտ 500 աշխատանքներ՝ նվիրված Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի պատմական անցյալին և սոցիալիստական ներկային։

«Շարժում», 16 սեպտեմբերի

ԼԵՀԱՍՏԱՆ

Վարշավայի «Մեանդեր» հանդեսում լույս են ընծայվել հատվածներ Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրության» գրքից։ Ներածական գրել է Սատանիսլավ Եղինակը «Դավիթ Անհաղթը և հունարան հայ դպրոցը» վերնագրով, որտեղ խոսվում է հայ հունարան դպրոցի և նրա խոշոր ներկայացուցիչ Դավիթ Անհաղթի գործերի մասին։ Հեղինակը կանգ է առնում հայ գրերի գյուտի և հայ դրականության կազմավորման հարցերի վրա, փիլիսոփայական մտքի ծագման վրա և այլն։

«Երևան», 15 սեպտեմբերի

ՀՈՒՆԳԱՐԻԱ

Հունգարիայի կառավարությունը որոշում է կայացրել Սովետական Միության կազմավորման 50-ամյակի առթիվ տպագրել 15 եղբայրական հանրապետությունների արվեստին ու մշակույթին նվիրված հատորներ։

«Օրմենիորսաց» («Հայաստան») է կոչվում մատենաշարի առաջին հատորը, որը լույս է տեսել 1972 թ. Բուդապեշտում և որի հեղինակն է արվեստագիտության դոկտոր Կարոյ Դոմբրոշը, լուսանկարները կատարել է Կարոյ Գինկոն։

Ընդարձակ ներածականով հունգար ընթերցողներին ամփոփ տեղեկություններ է հայտնվում հայ ժողովրդի պատմության, մշակույթի և արվեստի, ճարտարապետության մասին։ 145 լուսանկարներ ներկայացնում են Էրեբունին, Կարմիր բլուրը, Գառնին ու Գեղարդը, Էջմիածինը, Զվարթնոցը, Գոշավանքը և այլն։ Եվ շարք լուսանկարներ պատկերում են Երևանը։

«Պայքար», 13 հոկտեմբերի

Դ Դ Հ

Բեռլինի «Ֆոլկ ունդ վելտ» հրատարակչությունը լույս է ընծայել Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունների գերմաներեն ժողովածուն «Ադամոս վանք» խորագրով։

Գիրքն ընդգրկում է բազմաթիվ բանաստեղծություններ, պատմվածքներ, հեքիաթներ, ինչպես նաև «Անուշ» պոեմը և «Սասունցի Դավիթ» էպոսի Թումանյանի մշակումը։ Ժողովածուն կազմել է Էլկե Էբերը։ Գրքի վերջում զետեղված

է Թումանյանի կյանքին ու գործունեությանը նվիրված հոդված։

«Հայրենիքի ձայն», 2 օգոստոսի

* * *

Բեռլինում հրատարակվող «Ֆրայե Վելտ» («Ազատ աշխարհ») ամսագիրը իր վերջին համարներից մեկում ընդարձակ բաժին է նվիրել Սովետական Հայաստանին։ «Հայկական խոստովանություն» է կոչվում Հայաստանի այսօրն արտացոլող ավելի քան 10 մեծադիր լուսանկարներով պատրաստված հոդվածաշարը։

«Զարյոնմ», 27 դեկտեմբերի

ԵԳԻՊՏՈՍ

Կահիրեի Հայկական ընթերցասրահում հոկտեմբերի 12-ին Նոր սերունդ մշակութային մարմնի նախաձեռնությամբ տեղի է ունեցել հանդիսություն Թարգմանչաց տոնին նվիրված։ Կարդացվել են զեկուցումներ Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի մասին և բացահայտվել է նրանց դերը հայ ժողովրդի հոգևոր կյանքում։

«Ջահակիր», 26 հոկտեմբերի

ՍԻՐԻԱ

Հալեպում լույս է տեսել Ադիպ Սայեղի «Հայաստանը արաբական պատմության մեջ» գիրքը, որում վեր են հանված արաբ-հայկական հարաբերությունները մ. թ. VII—XIV դարերում։ Հեղինակը մասնավորապես անդրադարձել է Բագրատունիների ժամանակաշրջանին։

Ադիպ Սայեղը, ինչպես գրում է «Ջահակիրը», «արաբ-հայկական պատմական փոխհարաբերությունները ներկայացնելով արաբ ընթերցող զանգվածներուն կհետապնդի մեկ նպատակ՝ մեր օրերուն ավելի ևս զորացնել դարավոր հիմքեր ունեցող արաբ-հայկական բարեկամությունը»։

«Ջահակիր», 28 սեպտեմբերի

* * *

Հալեպի Նահատակաց եկեղեցու երիտասարդաց շրջանակը նոյեմբերի 26-ին կազմակերպել է Արշակ Չոպանյանի 100-ամյակին նվիրված հանդիսություն։ Արշակ Չոպանյանի կյանքի և գործունեության մասին զեկուցել է Հայկ Պարիկյանը։

«Պայքար», 16 դեկտեմբերի

ՀՈՒՆԱՍՏԱՆ

Ինչպես հայտնում է «Ջահակիրը», հունական «Թո Վեմա» օրաթերթի սեպտեմբերի 24-ի համարում գրված է, որ Մարջբրի Հովսեփյանի «Զմյուռնիո աղետը» գիրքը թարգմանվել է հունարեն (թարգմանիչն է Թ. Քարզիսը)։ Օրաթերթը գովասանքով է խոսել Մ. Հովսեփյանի մասին և գրել, որ նա «մեծագույն ծառայությունը կմատուցանե զմյուռնիացի հույն ժողովուրդին»։

«Ջահակիր», 19 հոկտեմբերի

ՇՎԵՅՑԱՐԻԱ

Շվեյցարիայում լույս տեսնող «Հայաստանի ձայն» («Դի շտիմե Արմենիս») թերթի հրատարակությամբ գերմաներեն լեզվով լույս են տեսել Հակոբ Պարոնյանի «Պաղտասար աղբար» և «Ատամնաբույժն արևելյան» կատակերգությունները, որ թարգմանել է Հակոբ Գրիգորը։ Գրքին կցված են թարգմանչի ծանոթագրությունները, Պարոնյանի կյանքի և ստեղծագործության մասին։

«Լրաբեր», 11 նոյեմբերի

ԱՆԳԼԻԱ

Մանչեստրի «Գարդիըն Ուիքլի» պարբերականը նոյեմբերի 25-ի համարում տպագրել է Քեմփբել Փեյջի դրախոսականը Մարջբրի Հովսեփյանի «Զմյուռնիո աղետը» գրքի մասին։ Դրախոսականում, ինչպես տեղեկանում ենք «Պայքարից», մասնավորապես ասված է. «Օրիորդ Հովսեփյան, ինք իսկ հայ մը, կորովի այլ զուսպ կերպով գրած է պատմությունը և հավաքած է մասնավորապես արժեքավոր նոր տեղեկություններ ողջ մնացած ականատես վկաներե։ Պատմագրության և դիվանագիտական բարոյականի մասին խորունկ հարցեր կարծարծե ան՝ վերջին գլուխին մեջ, որ կվերլուծե այն համառ փորձերը, որ կկատարվին՝ Զմյուռնիայի ջարդերը այլափոխելով ներկայացնելու իրր տեղական մանր դժվարություն մը, որուն մեջ երկու հաղարյակ մը անձեր մեռած են դժբախտարար»։

«Պայքար», 6 դեկտեմբերի

* * *

Լոնդոնի հայ տան վարիչների նախաձեռնությամբ պարբերաբար կազմակերպվում են գեղարվեստական երեկոներ, իսկ շաբաթ և կիրակի օրերը երիտասարդների համար հայերեն դասընթացներ։ Վերջերս տեղի է ունեցել Պետրոս Դուրյանի ծննդյան 100-ամյակին նվիրված երեկո։ Բանաստեղծի կյանքի և գործունեության մասին ելույթ է ունեցել Կ. Ծսայանը, որից հետո տրվել է գեղարվեստական բաժին։

«Ջահակիր», 7 դեկտեմբերի

ԿԱՆԱԴԱ

Մոնրեալի Մամիկոնյան մշակութային հանձնախումբը կազմակերպել է հայ պարբերական մամուլի ցուցահանդես, որի պաշտոնական բացումը տեղի է ունեցել դեկտեմբերի 14-ին։

«Պայքար», 17 դեկտեմբերի

* * *

Հոկտեմբերի 29-ին Մոնրեալի Պոլսահայ Միության սրահում տեղի է ունեցել Ավետիք Իսահակյանի մահվան 15-ամյակին նվիրված հարգանքի երեկո։

Բացման խոսքով հանդես է եկել Մշակութային հանձնախմբի ատենապետ Գաբրիել Պասմաճյանը, այնուհետև պրոֆ. դոկտ. Գևորգ Պաղճյանը հանգամանորեն անդրադարձել է Իսահակյանի կյանքին ու գործունեությանը։ Տրվել է ճոխ համերգ։

«Ջահակիր», 21 դեկտեմբերի

ԱՄՆ

The National Geographic ամսաթերթը իր վերջին համարում հավելված է հրատարակել «Միջին Արևելքի մշակույթներու քարտեսը» վերնագրով։ Հայերի մասին գրված են մի քանի հատվածներ, որոնցից մեկում ասված է, որ «Ա համաշխարհային պատերազմին, Թուրքերը՝ վախնալով հայերե թե կրնան ռուսաց հետ գործակցիլ, տեղահան ըրին կամ ջարդեցին շուրջ մեկ ու կես միլիոն հայեր»։ Մի ուրիշ հատվածում հայերը ներկայացված են իբրև աշխատասեր և ուշիմ ժողովուրդ։

«Նոր օր», 1 օգոստոսի

* * *

Նյու-Յորքի հայկական համայնքը Դիոսեղան մշակութային կենտրոնում կազմակերպել է հայկական արվեստի տասնօրյակ։ Բացվել են ամերիկահայ նկարիչ Սարգիս Խաչատրյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը, որը համընկել է նրա մահվան 25-րդ տարելիցին, Յուսուֆ Կարշի լուսանկարչական աշխատանքների և ժամանակակից ամերիկահայ նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդեսը։

Գյուլբենկյան կենտրոնում Դիոսեղանի թատերախումբը ներկայացրել է Ալ. Շիրվանզադեի «Պատվի համար» դրաման, ապա Վիլյամ Սարոյանի և Էդ. Սեդրակյանի մեկ գործողությամբ պիեսները անգլերեն։

Փառատոնի ծրագրում եղել է նաև Ռուբեն Մամուլյանի կինոնկարի ցուցադրումը, հայկական ժողովրդական պարի ելույթներ, Լուսին Ամարայի և Լիլի Զուգասզյանի համերգները, Ալան Հովհաննեսի ելույթը և հայկական տաճարում տրված եզրափակիչ մեծ համերգը, որին մասնակցել է նաև այդ առիթով Բրյուսելից հրավիրված Շուշանիկ Միլդոնյանը։

«Գրական բերք», 4 օգոստոսի

ՀԱՅԵՐԻ ԹԻՎԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Լիբանան	—	180.000
Սիրիա	—	135.000
Թուրքիա	—	125.000
Իրան	—	190.000
Իրաք	—	16.000
Հորդանան	—	1.800
Պաղեստին (Երուսաղեմ)	—	2.500
Իսրայել	—	850
Արաբական Միացյալ Երկրներ	—	500
Կիպրոս	—	3.700
Քուվեյթ	—	7.000
Հնդկաստան	—	100
Մայրագույն Արևելքի այլ երկրներ (Սինգապուր, Ֆիլիպիններ, Ճապոնիա, Բիրմա, Ինդոնեզիա, Բանգլադեշ և այլն)	—	500
ԱՄԵՐԻԿԱ		
Ա. Մ. Ն.	—	400.000
Կանադա	—	15.000
Մեքսիկա	—	250
Կուբա	—	100
Վենեսուելա	—	1.200
Բրազիլիա	—	15.000
Ուրուգվայ	—	13.000
Արգենտինա	—	45.000
Չիլի	—	500
Հարավային Ամերիկայի այլ երկրներ	—	1.000

ԱՖՐԻԿԱ

Եգիպտոս	—	15.000
Սուդան	—	850
Եթովպիա	—	1.000
Հյուսիս. Աֆրիկայի այլ երկրներ	—	750
Քենիա	—	75
Աֆրիկյան այլ երկրներ	—	500

ԵՎՐՈՊԱ

Հունաստան	—	11.000
Բուլղարիա	—	25.000
Ռումինիա	—	8.000
Հունգարիա	—	675
Իտալիա	—	1.500
Ավստրիա	—	300
Հարավսլավիա	—	100
Գերմանիա	—	500
Շվեյցարիա	—	400
Ֆրանսիա	—	175.000
Բելգիա	—	1.000
Հոլանդիա	—	100
Անգլիա	—	5.000
Եվրոպական այլ երկրներ	—	300

ՕՎԿԻԱՆԻԱ

Ավստրալիա	—	7.500
Նոր Զելանդիա	—	25

«Հայ ավետ. կոլլեջ», Բեյրութ, 1972, էջ 5։

Ն. ՎԱՐԴԱՆՅԱՆ